

## ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԵԱՐՀԱՅԻՆ X ԿՕՆԳՐԵՍԸ

### IV

1901 թ. սեպտեմբերի 11-ին, առաւօտեան, Ս. Անդրէի Հալլում կայացաւ Կօնգրէսի երկրորդ նիստը, նախագահութեամբ դօկտօր Սպինս Վատսօնի:

Քննուած է Շ Թանձնաժողովի մշակած հարցը՝ «Քրիստոսի վարդապետութիւնը պատերազմի վերաբերմամբ», առաջարկութիւն օրիորդ Հելլէն Րօբինզօնի: Օրիորդը յարձակուած է եկեղեցւոյ պաշտօնականների վրայ, որոնք ջանքեր չեն գործադրում տարածելու քրիստոնեանների մէջ այն գաղափարը, թէ պատերազմը, միլիտարիզմը բացարձակապէս հակառակ են քրիստոնէական վարդապետութեան ոգուն. եթէ Քրիստոսի պաշտօնեանները քարոզած լինէին այդ միտքը, պատերազմները վաղուց դադարած կը լինէին քրիստոնեայ երկրների մէջ և այսօր եղբայրասպան պատերազմը տալը չէր ունենալ Հարաւային Աֆրիկայում: Եթէ մենք հետևում ենք Քրիստոսին, պէտք է ուրեմն կատարենք նրա պատուիրանները. արդ, այդ պատուիրանները միանգամայն դատապարտում են պատերազմի սխտեմը: Պէտք է հրատարակել, քարոզել, թէ ով կողմնակից է պատերազմի գաղափարին, նա քրիստոնեայ չէ. իսկական քրիստոնեան միայն խաղաղասէր է:

Գասօն Մօլս բողոքում է վերջին խօսքերի դէմ. խաղաղութեան գաղափարը չը պէտք է կապել քրիստոնէութեան հետ. դեռ Քրիստոսից 550 տարի առաջ Կօնֆուցիոսը դատապարտել է պատերազմը. չինացիները քրիստոնեաներ չեն, բայց խաղաղասէր են. խաղաղասիրութեան գաղափարը պէտք է կապել գիտութեան և բարոյականութեան և ոչ կրօնի հետ:

Շ Թանձնաժողովը առաջարկում է հետևել որոշումը, որ կարող է գոհացնել թէ հաւատացողներին և թէ ազատ մտածողներին. այն է՝

«Ի նկատի ունենալով, որ Եւրոպայի ու Ամերիկայի գրեթէ բոլոր պետութիւնները այն դաւանութիւնն ունեն, թէ իրան»

իշխանութիւնը հիմնում են քրիստոնէական բարոյականութեան վրայ,

«Ի նկատի ունենալով, որ այդ բարոյականութիւնը արգելում է ատելութիւնը, բռնութիւնը և անարդարութիւնը մարդկանց մէջ և պատուիրում է եղբայրսիրութիւն, համակրութիւն և սէր,

«Ներկայ կօնգրէսը այն կարծիքն է յայտնում, որ տոկոսն ջանքեր պէտք է դործադրուեն արմատացնելու այդ ճշմարտութիւնները այդ պետութիւնների կառավարութիւնների և քաղաքացիների մէջ, որպէս զի բոլորովին համոզուեն, որ պատերազմը և միլիտարիզմը բացարձակապէս հակասում են Քրիստոսի վարդապետութեան էութեան»

«Կօնգրէսը կոչում է անում բոլոր քրիստոնեայ դաստիարակիչներին՝ օգնելու այդ ջանքերին»:

Այս որոշումը ընդունւում է ձայների բացարձակ առաւելութեամբ:

## ՔՅՈՒՄԸ Է Հայոց հարցը:

Նախագահը յայտնում է, որ կօնգրէսի քննութեան առաջարկուած այժմէական հարցերից միայն մինը ունենալով միջազգային բնուրոյթիւն, այն է հայոց հարցը, կօնգրէսը ստիպուած է քննել միայն այդ հարցը, թողնելով Տրանսիլաւի և չինական հարցերը, իբրև ներքին քաղաքականութեան վերաբերեալ հարցեր: Հայոց հարցի համար A Յանձնաժողովը պատրաստել է իր զեկուցումը և որոշման բանաձևը. տեղեկագրեր կարգուած է Ռուսաստանի ներկայացուցիչ Նովիկով, որ կը ներկայացնի իր զեկուցումը պ. Հ. Առաքելեանի տեղեկագրի ընթերցումից յետոյ. այդ տեղեկագիրը, որ ունի այս վերնագիրը՝ «La question arménienne au point de vue de la paix universelle» («Հայոց հարցը համաշխարհային խաղաղութեան տեսակէտից») — բաժանւում է կօնգրէսի անդամներին:

Կարդաղուում է տեղեկագիրը, որ բաղկացած է 64 էջից:

Նովիկով. — Մեր կողէզ Առաքելեանի տեղեկագրից յետոյ, ինձ չատքիչ բան է մնում ասել. կարդալով այդ տեղեկագիրը դուք զարհուրած մնում էք այն յանցաւոր անտարբերութեան առաջ, որով քրիստոնեայ պետութիւնները վերաբերուեցին Հայաստանում կատարուած գարշելի գաղանթիւններին: Պէտք է տեսն սակայն, որ այդ աղէտի պատասխանատուութեան մեծ մասը ծանրանում է Անգլիայի վրայ, որովհետև նա արգելեց Ռուսաստանին զսպել և պատժել սուլթանին իր անվստահութեամբ և կասկածամտութեամբ. արևելքի քրիստոնեաների ա-

ղէտները պատճառը եւրոպական մեծ պետութիւնների միմեանց մէջ ունեցած գոտութիւնն է։ Այդ պատճառով յանձնաժողովը մշակել և ուղարկում է կոնգրէսին հետեւեալ որոշումը.

«Ուաշաղտութեան Համաշխարհային X կոնգրէսը, գումարուած Գլխակովում 1901 թ. սեպտեմբեր ամսին, ծանօթանալով Բերնի միջազգային բիւրօի տեղեկագրի հետ, ծանօթանալով այն յիշատակագրի հետ, որ ներկայացրել է հայ հրապարակախօս պ. Հ. Առաքելեան թիւրքիայի հայերի այժմեան վիճակի մասին և այն նամակի հետ, որ գրել են Ամերիկայի Միացեալ Նահանգների Ուաշաղտութեան ընկերութիւնները.

«Ի նկատի ունենալով, որ թիւրքիայի հայ ժողովրդի տխուր վիճակը ամենեին չէ բարւոքուել, որ կոտորածները և գաղանթութիւնները չարունակւում են Հայաստանում, որ Բերլինի դաշնագիրը ստորագրող եւրոպական պետութիւնները ոչ մի հաւաքական ջանք չը գործադրեցին՝ վերջ դնելու համար այն անկարգութիւններին, որոնք գործւում են այդ դժբախտ քրիստոնեայ ազգի գէմ,

### Որոշում է.

«Ուղարկել մի աղերսագիր Բերլինի դաշնագիրը ստորագրող եւրոպական պետութիւններին, հրաւիրելով նրանց գումարել մի պաշտօնական վեհաժողով (conference), լուծելու համար հայոց հարցը՝ գործադրմամբ Բեֆօրմների այն ծրագրի, որ մշակել են 1895 թ. մայիսին անգլիական, ֆրանսիական և ռուսաց կառավարութիւնները և հաստատուել նոյն իսկ սուլթանին :

Նախագահ.—Վիճարանութիւնը Յանձնաժողովի առաջարկած բանաձևի մասին բացում է։ (Մենք առաջ ենք բերում այդ վիճարանութիւնը քաղաածօրէն, ինչպէս ապուած է «Glasgow Herald» լրագրի մէջ, սեպտ. 12-ին)։

Միսը Ժօզէֆ Ասիւրջ, միսիօնէր Բիրմինգհեմից.—Ես մեծ համակրութեամբ եմ վերաբերում հայերին նրանց կրած աղէտների համար և ինքս երկար ժամանակ ապրած լինելով թիւրքիայում, իբրև միսիօնէր, վկայում եմ, որ հայերի աղէտների պատճառը թիւրքական յոռի կառավարութիւնն է. սակայն ես ընդդէմ եմ այդ որոշման, որովհետև նա առաջ կը

ընդիմադրեալ միջամտութիւն: Մեր կօնգրէսի նպատակն է մնայուն և համաշխարհային խաղաղութիւն, հետևաբար նա չը պէտք է կայացնի մի այնպիսի որոշումն, որ կարող է պատերազմ առաջ բերել, որովհետև Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը միայն պատերազմի միջոցով կարող են ստիպել Թիւրքիային գործադրել բէֆօրմներ ծրագրերը:

Վերապահուելի հայր Սպրեդ Սմիթ.—Ձայնակցում եմ միտար Ստիւըլի ասածին. եթէ մենք կայացնենք այդպիսի մի որոշումն, մեղանից կը պահանջեն որոշումն կայացնենք նաև Ռուսաստանի հրէաների մասին, իրլանդացիների, բօէրների և Եւրոպայում յուզուող անտիսեմիտական հարցի մասին: Այդպիսի մի որոշումն հակառակ կը լինի մեր կօնգրէսի սկզբունքներին:

Պրօֆեսօր Քուիդ, Միւնիսթրից.—Եթէ մենք այդպէս վախենք թէ մեր այս և այն որոշումը կարող է պատերազմ առաջ բերել, այն ժամանակ խաղաղութեան կօնգրէսները այլ ևս ոչ մի հարց չը պէտք է արծարծէին. վերջապէս այդ վախը անհիմն է. մենք յիշեցնում ենք մեծ պետութիւններին այն պարտաւորութիւնները, որ նրանք հանդիսաւորապէս յանձն են առել և չեմ կարծում, որ այդ պետութիւնների միացեալ կամքի առաջ անմիջապէս չը խոնարհուէր Թիւրքիան:

Նովիկով.—Մեր առաջարկած որոշումը ոչ մի պատերազմ չէ կարող առաջ բերել. բաւական է մեծ պետութիւնների բարոյական ազդեցութիւնը՝ բէֆօրմները գործադրել տալու համար:

Հ. Առաքելեան.—Ես զարմանում եմ, որ մի այսպիսի առաջարկութիւն կարող է որ և է ընդդիմութեան հանդիպել ներկայ կօնգրէսի սէշն, ոչն միակ նպատակն է, ինչպէս շատ լաւ ասաց մի անգամ Ֆրիդերիկ Պասէ, նուազեցնել մարդկային տանջանքների գումարը: Մենք ամենքս, տարախոյս չը կայ, համակրում ենք բոլոր հարստահարուած և ճնշուած ազգներին, բայց դուք, պարոններ, մոռանում էք մի բան. հրէաներին Ռուսաստանում և իրլանդացիներին Բրիտանիայում չեն կոտորում—չեն մորթոտում ոչխարների նման, մինչ հայերին Թիւրքիայում կոտորում են. չը պէտք է մոռանաք, որ Եւրոպան պարտաւորութիւն է յանձն առել հայերի վերաբերմամբ Բերլինի դաշնագրով և զրանով հայոց հարցը դարձել է միջազգային հարց, մինչ հրէաների և իրլանդացիների հարցը ներքին քաղաքականութեան շրջանին են վերաբերում, որի մէջ մենք միջամտել իրաւունք չունենք:

Օրիորդ Կիրակոսեան, հայուհի.—Ես Կ. Պօլսից փախած մի հայ օրիորդ եմ և լաւ ծանօթ եմ թշուառ ազգակիցներին վիճակին. ևս ես կարծում եմ, որ առաջարկած որոշումը նոր աղէտ-

ներքի դուռը կը բանայ ազգիս համար. Եւրոպան դարձեալ ոչ մի իրական օգնութիւն չի անի մեզ. աւելի լաւ է բարոյական ոյժ գործ դնել:

Օրինոդ Հելլէն Ռօբինզօն.— Ես միանգամայն ձայնակցում եմ յանձնաժողովի առաջարկած որոշման. պէտք է վերջապէս, վերջ դնել թշուառ հայ ժողովրդի անտանելի տանջանքներին:

Նախագահը փակելով վիճաբանութիւնները, քուէարկութեան է դնում բանաձեւն և յանձնաժողովի որոշումը ընդունւում է բացարձակ առաւելութեամբ:

### Քննուում է միջազգային լեզուի հարցը.

Պարիզի կօնգրէսը հրապարակի վրայ է դրել մի միջազգային ընդհանուր լեզու ստեղծելու հարցը: Օ Յանձնաժողովը այն կարծիքի է, սակայն, որ աւելի յարմար կը լինի ընտրել զանազան լեզուների միջից ամենադիւրին կերպով հասկացուող ոճեր, և ոչ թէ պէտք է վերացնել գոյութիւն ունեցող լեզուները, այլ կազմել մի պարզ միջազգային լեզու, որ պատկանելիս չը լինի որեւէ մի առանձին լեզուի: Օրինակ, չէ՞ որ կայ մի միջազգային լեզու երաժշտութեան և մատենատիկայի համար: Նոր լեզուն պէտք է գործադրուի առետրական և գիտնական յարաբերութիւնների մէջ:

Միսը Բալլա գտնում է, որ այդ առաջարկութիւնը միանգամայն անգործածական է: Մենք դեռ չենք կարողացել ընդունել տալ չափերի և կշիռների մի միջազգային ընդհանուր ցուցակ, իսկ դուք ուզում եք, որ կօնգրէսը Բաբելի մի նոր աշտարակ կառուցանի, խառնակելով լեզուները. միջազգային լեզուն ուտօպիա է: Կօնգրէսի առաջին գործը պէտք է լինի ընդունել տալ իրաւարարութեան, արբիտրաժի սկզբունքը միջազգային վէճերի լուծման համար:

Գասօն Մօխ յայտնում է այն կարծիքը, որ աւելի լաւ է խօսել մի միջազգային օժանդակ լեզուի մասին և չը գործածել միջազգային լեզու դարձուածքը:

Հետդիտէ խօսում են և ուրիշները, որոնք նոյնպէս անգործնական են գտնում միջազգային լեզուի գաղափարը. ի վերջոյ կօնգրէսը քուէարկում է հետեւեալ որոշումը.

«Կօնգրէսը յայտնում է, որ նա յարում է մի միջազգային օժանդակ լեզուի ընդունելութեան ընդհանուր սկզբունքին, Կօնգրէսը հրաւիրում է ներկայ պատգամաւորներին գումարուել անյապաղ ըստ լեզուների և ընտրել երկու պատգամաւոր ամեն մի լեզուի համար»:

Քննում է խաղաղութեան ընկերութիւնների միութեան հարցը.

Ֆելիքս Մօլըլէ առաջարկում է, որ անհրաժեշտ է սերտ միութիւն առաջ բերել երկրագնդի վրայ տարածուած խաղաղութեան բոլոր ընկերութիւնների մէջ՝ թէ հրատարակութիւնների, հանդէսների, բրոշիւրների միջոցով և թէ ստեղծելով մի յատուկ յանձնաժողով, որ այդ միութեան միջնորդ հանդիսանար Բոլոր խաղաղասիրական ընկերութիւնների համերաշխ և միաբան գործունէութիւնը հզօր դարկ կը տար խաղաղութեան գաղափարին:

Կօնգրէսը կայացնում է հետեւեալ որոշումը.

«Կօնգրէսը փափագ է յայտնում, որ մի և նոյն երկրում գոյութիւն ունեցող խաղաղասիրական ընկերութիւնները պէտք է աշխատեն համախմբուել ի մի ունենալով գաւառական ճիւղեր, կամ գոնէ ստեղծել իրանց մէջ դաշնակցական կապ այն ձևով, որ կանոնաւորեն պրօպագանդան և դիւրացնեն խաղաղութեան բարեկամների ջանքերը ամեն մի երկրում»:

Ժամը 2-ին նիստը փակւում է: Երեկոյեան, Պիսլի քաղաքի քաղաքապետը հանդիսաւոր ընդունելութիւն է անում Կօնգրէսի անդամներին և այդ քաղաքում կայանում է միտինգ ի պատիւ Կօնգրէսի անդամների:

## V

Սեպտեմբերի 12-ին, նիստը բացւում է սըր Ժօզէպ Պիզի նախագահութեամբ: Կօնգրէսի անդամների մէջ նկատւում է իրարանցում, յուզմունք. այդ գիշեր Լօնդօնից եկել է յայտնի հրապարակախօս միստր Սեդըր, բօէրների դատի անվաներ պաշտպանը: Լսելով որ խաղաղութեան Կօնգրէսը անյարմար է համարել զբաղուել Տրանսվաալի խնդրով, նա շտապել է գալ և նորից յարուցանել այդ հարցը:

Քննում է խաղաղութեան կազմակերպութեան հարցը:

Միջազգային իրաւունքի՝ B Յանձնաժողովի տեղեկագիր էմիլ Արնօ բալատրում է, թէ արդէն կազմուել է միջազգային մի դատարան, այն է Հաագի գերագոյն ատեանը, որ պատրաստ է գործել, երբ դիմեն իրան. ամենքը յոյս ունէին, որ այդ ատեանը կը կոչուէր խաղաղութիւնը պահպանելու, բայց, զրգբախտաբար, այդ կոչումը չեղաւ: Եւ սակայն, հարկ չը կայ յուսահատուելու. խաղաղութեան գաղափարը անագին և արագ

առաջադիմութիւն է գործում, բազմաթիւ նամակներ, ուղղուած Լեւրիւնի խաղաղութեան բււրօյին, Ֆրանսիայի զանազան բանուորական շրջաններից, յայտնում են, որ այդ շրջանները միաբան են խաղաղութեան ընկերութիւնների հետ և գործում են նոյն ուղղութեամբ—տեսնել իրագործուած միջազգային հղբայրակցութեան և դաշնակցութեան իդէան: Մենք, խաղաղութեան կօնգրէսներս, չը պէտք է այլ ևս բաւականանանք դատապարտելով միայն պատերազմի գաղափարը, երևան հանելով պատերազմի գործած աղէտները, այդ միայն բացասական գործունէութիւն է: Այժմ պէտք է սկսել դրական գործունէութիւն. պէտք է այսուհետեւ աշխատել ոչ թէ միայն պատերազմը վերացնելու, այլ և խաղաղութեան գործը կազմակերպելու: Պնդել թէ պէտք է զինաթափուել, ոչ մի արդիւնք չի ունենայ. ընդհանուր զինաթափութիւնը ներկայ պայմաններում անհնարին է: Պէտք է վերացնել առաջ պատերազմի պատճառները, պէտք է ապացուցանել, որ միջազգային վէճերը կարող են լուծուել յաջող կերպով առանց պատերազմի, իրաւագիտական եղանակով, ինչպէս լուծւում են անհատական վէճերը. պէտք է ուրեմն մի օրէնսդրութիւն, որ գործադրելի լինի ոչ թէ մի ազգի, այլ բոլոր ազգերի համար և որին հնազանդեն բոլոր ժողովուրդները. դա կը լինի միջազգային և բնական օրէնք. այն ազգը, որ չի հնազանդուի այդ բնական օրէնքին, կը համարուի բանադրուած քաղաքակիրթ աշխարհից. կը համարուի բարբարոս: Ուրեմն անհրաժեշտ է մեզ ամեն ջանք գործ դնել ստեղծել միջազգային օրէնադրութիւն, հիմն ունենալով այն էական կէտերը, որ արգէն մշակել են նախորդ կօնգրէսները, այն է.

1) Ոչ մի անհաս իրաւունք չունի ինքն իր ձեռնով արդարութիւն անել:

2) Այն օրէնքը, որ գործադրելի է անհասների վերաբերմամբ, փոխադարձ վեհերի ժամանակ, պէտք է գործադրուի եւ ազգերի վերաբերմամբ. ճեշտաբար, ոչ մի ազգ կամ պետութիւն իրաւունք չունի պատերազմ հրահարակել մի այլ ազգի դէմ:

3) Բոլոր վեհերը ազգերի մէջ պէտք է լուծուեն օրինական հանապարհով, միջազգային դատարաններով կամ արբիտրաժով:

4) Ամեն մի ազգի ինքնավարութիւնը (աւտօնօմիա) անբռնաբարելի է:

5) Նուաճման իրաւունք գոյութիւն չունի:

6) Ազգերը ունեն անկապտելի իրաւունք ազատաբար տեսնել իրանց վիճակը:

Այդ հիման վրայ B Յանձնաժողովը առաջարկում է կօնգրէսի վճռին հետևեալ եզրակացութիւնները.

I. Խաղաղութեան X Համաշխարհային կօնգրէսը եռանդուն կերպով բողոքում է այն ամբաստանութեան դէմ, թէ խաղաղութեան ընկերութիւնների անդամները հակա-հայրենասիրական են: Խաղաղասէրները աշխատելով ազատել իրանց սեպհական երկիրը պատերազմից, զբաղվում ամենից լաւ աշխատում են նրա ապահովութեան:

Կօնգրէսը յայտարարում է, որ նա նկատում է զինաթափութիւնը իբրև խաղաղութեան կազմակերպութեան հետևանք և ոչ իբրև խաղաղութեան հասնելու միջոց: Նա համոզուած է, որ երբ ազգերը գործադրեն արդարադատութեան այնպիսի մի միջոց, որ խաղաղութեամբ լուծէ միջազգային վէճերը, այն ժամանակ զինաթափութիւնը ինքն ըստ ինքեան կ'առաջանայ:

Կօնգրէսը ընդունում է, որ Հաագայի ատեանի գոյութիւնը, մասնաւոր չնայ գործադրութիւնը, ինչպէս և արբիտրաժի դաշնագրերի կնքումը՝ միջազգային վէճերի խաղաղ լուծման համար, կարող են հասցնել այդ հետևանքին:

II. Կօնգրէսը մեծ հաճուքով հաստատում է Հաագայի արբիտրաժի միջադէպի ատեանի կազմութիւնը, որ մի կարևոր էտապ է խաղաղասիրական շարժման ասպարէզում:

Կօնգրէսը շնորհատրում է կառավարութիւններին այդ ատեանի հաստատութեան համար, որ ոչնչացնում է վերջին առարկութիւնները ի նպաստ պատերազմի անհրաժեշտութեան: Նա հաստատու չէլս ունի, որ ապագայում ամեն մի միջազգային վէճ, — որ չէ կարող կանոնաւորուել կամ դիպլոմատիական եղանակով կամ այլ խաղաղասիրական միջոցներով — կ'ենթարկուի Հաագայի ատեանի իրաւարարութեան:

III. Կօնգրէսը յանձնարարում է խաղաղութեան ընկերութիւններին հետամուտ լինել, որ իրանց երկիրները դաշնագրեր կնքեն միմեանց մէջ, որով պարտաւորուեն ենթարկել Հաագայի ատեանի արբիտրաժին ամեն մի վէճ, որ չը կարողանան բարեկամաբար լուծել:

Կօնգրէսը լոյս ունի, որ այդպիսի դաշնագրեր կը կնքուեն անդադար հետեւեալ պետութիւնների մէջ, այն է՝

- 1) Ամերիկեան 19 հանրապետութիւնների մէջ.
- 2) Ֆրանսիայի և Մեծն-Բրիտանիայի մէջ.
- 3) Մեծն-Բրիտանիայի և Միացեալ-Նահանգների մէջ.
- 4) Ֆրանսիայի և Ռուսաստանի մէջ:

Խօսքը տրւում է միասր Սաէդին, «Review of Reviews» հանդիսի նշանաւոր խմբագրին:

Ինչպէս անդամներից մինը նկատեց, Սաէդ ոււմբի պէս պայթեց կօնգրէսի գլխին. «Շատ հեշտ է, սկսեց նա, տանել ձին դէպի ջուրը և մի մարդ կարող է առաջնորդել նրան, բայց հազար մարդ չեն կարող ստիպել նրան խմել: Այդպէս և Հաագի կօնֆերենցիան առաջարկեց ազգերը դէպի աւազանը, բայց

նա չը կարողացաւ ստիպել խմել. նա չը կարողացաւ ստիպել կառավարութիւններին կատարել որոշումները. մնում է ուրեմն, որ ժողովրդական զգացման պայթիւնը ստիպէ նրանց. արդ, կօրգրէսը ևս, իբրև այդ զգացմանը և համաշխարհային խղճատանքի արտայայտիչ, պէտք է պայթէ: Եթէ դուք մկնի չափ քաջութիւն ունենաք, պէտք է պայթէք. ինչ, դուք, որ երկրի աղն էք, չէք պայթում, զայրոյթի, անէծքի աղաղակներ չէք արձակում, ինչպէս կամենում էք ուրեմն, որ ամբողջ փողոցում այդ աղաղակն արձակէ: Damn, damn, damn—անէծք, անէծք, անէծք, արտասանեցէք, երկնքի, երկրի շանթերը կանչեցէք անգլիական ազգի գլխին, որ դաւաճանելով իր պատմութեան, իր աւանդութիւններին, թոյլ է տալիս իր կառավարիչներին գործել այսպիսի սոսկալի անարդարութիւն, ինչպէս ներկայ եղբայրասպան պատերազմը:

Կրակոտ տոննաբանը յարձակում է ապա հոգևորականութեան վրայ. ապացուցանելով որ քրիստոնէութեան ոգին միանգամայն հակառակ է պատերազմի գաղափարին, նա ասում է, որ բոլոր եկեղեցիները պէտք է փակեն իրանց դռները և քահանաները պէտք է յայտարարեն, որ ոչ մի աղօթք, քարոզ չեն արտասանի, ոչ մի կրօնական ծէս չեն կատարի, մինչև որ կառավարութիւնը չը դադարեցնի պատերազմը: Միթէ կարելի է գնալ աղօթել, հոգեհանգիստներ կատարել, երբ ձեռքերդ թաթախուած է եղբօրդ արիւնով: Անգլիան, չընդունելով բօէրների առաջարկը՝ դադարեցնել պատերազմը և արբիտրաժի յանձնել վէճը, պէտք է համարուի քաղաքակիրթ ազգերի շարքից դուրս, բանադրուած մարդկութիւնից:

Իր ճառը Ստէդ վերջացնում է արաջարկելով՝ բանադրել անգլիական ազգը եւ հրատարակել նրան ֆաղափախիք մարդկութիւնից դուրս:

Այսպիսի մի առաջարկութիւն, տարակոյս չը կայ, մեծ յուզմունք և ընդդիմադրութիւն պէտք է յարուցանէր:

Դոկտօր Դարբի.—Մեր բարեկամ միտքը Ստէդը պայթեց, բայց ես անկեղծ կերպով աղերսում եմ կօնգրէսին չը պայթել, այլ պաղարիւնութեամբ և արժանապատուութեամբ դատել, գործել: Եթէ մենք կայացնենք այդպիսի մի որոշում, մենք ծաղրի առարկայ կը դառնանք ամբողջ աշխարհի առաջ. բանադրուած մարդկութիւնից. միթէ այդտեղ առողջ միտք կայ:

Պրօֆեսօր Փուլիդ, Միւնխենից.—Մենք պէտք է չնորհակալ լինենք միտքը Ստէդից, որ առիթ տուեց մեզ խօսել Տրանսպալի պատերազմի մասին: Անգլիական մամուլը կարծում է, որ հասարակաց կարծիքը Գերմանիայում թշնամաբար է տրամա-

գրուած դէպի Անգլիան և անգլիատեցութիւն է տիրում Գերմանիայում. այդ սխալ է. գերմանական ազգը հակառակ է այժմեան պատերազմին, իբրև անարդար, բայց նա երբէք չէ կարող մոռանալ, որ Անգլիան եղել է միշտ քաղաքական և ժողովրդական ազատութեան օջախ. նա ապաստարան է տուել աշխարհի բոլոր քաղաքական և կրօնական հալածեալներին. նա տուել է. այնպիսի համաշխարհային հանճարներ, ինչպէս՝ Շէքսպիր, Բայրօն, Դարվին. նրա գրականութիւնը ահագին ազդեցութիւն է գործել գերմանական գրականութեան վրայ. Բանադրել այդպիսի մի ազգ նրա համար, որ նրա մի մասը կամ նրա կառավարութիւնը վարակուել է ջինգօական գաղափարով, այդ անկարելի է:

Հետզհետէ խօսում են ուրիշ ճառախօսներ. վիճարանութիւնը տևում է ամբողջ օր և միայն երեկոյեան ժամը 5-ին կօնգրէսը մի ելք է գտնում դժուար դրութիւնից դուրս գալու համար, կայացնելով այսպիսի մի ընդհանուր վճիռ. «Կօնգրէսը յայտարարում է, թէ այն ազգը, որ կը մերժէ իր միջազգային վէճերը լուծել արբիտրաժի միջոցով և կը դիմէ զէնքին, արժանի չէ նկատուելու իբրև քաղաքակիրթ ազգ»:

### Սեպտեմբերի 13-ի նիսքը:

Այդ վերջին նիստում շօշափուած և վճռուած հարցերի մէջ նշանաւորներն են. 1) Միսիօնարների գործողութիւնները և նրանցից ծագող վտանգները, 2) Ոչ-քրիստոնեայ երկրների մէջ քրիստոնեայ հպատակներին չնորհած դիպլոմատիական պաշտպանութիւնը, 3) Միլիտարիզմը և զինուորագրութիւնը, եւ իբրև եզրակացութիւն՝ կօնգրէսի աշխատութեան՝ եղաւ Appel aux nations—«Կոչ ազգերին» կոչուած հրաւերը:

Ես առաջ կը բերեմ միայն վերոյիշեալ երեք հարցերի մասին կայացրած վճիռները.

I. Կօնգրէսը ի նկատի ունենալով որ ամեն մի ազգի պարտաւորութիւնն է պաշտպանել օտար երկրների քաղաքացիներին, որոնք ապրում են իր սահմաններում և իր սեփական քաղաքացիներին, որոնք ապրում են օտար երկրներում, որչափ ժամանակ որ սրանք յարգում են այն երկրների օրէնքները, ուր իրանք հաստատուած են. ի նկատի ունենալով նոյնպէս, որ խորին սքանչացումն պէտք է տածել դէպի այն անհատները, որոնք զոհուած են իրանց բարեկեցութիւնը և կրքեմն իրանց

կեանքը իրանց հաւատի տարածման համար և որ ամեն մի անհատ իրաւունք և պարտաւորութիւն ունի իր համոզումները տարածել իր նմանների մէջ:

### Կօնգրէսը կարծում է

որ պէտք է խստութեամբ պատուիրել միսիօնարներին հետո պահել իրանց ամեն մի գործողութիւնից, որ կարող է, նոյն իսկ անուղղակի, առաջնորդել իրանց երկիրները դէպի պատերազմ. որ նրանք չը պէտք է երբէք կոչոււմ անեն իրանց կառավարութիւններին՝ վրէժխնդիր լինելու իրանց դէմ գործած յանցանքների համար, և որ նրանք պէտք է հասկանան թէ իրանք պարտաւոր են յենուել լոկ իրանց անշահասէր ջանքերի, բարոյական հեղինակութեան զօրութեան և ոչ զէնքի ոյժի վրայ:

II. Ի նկատի ունենալով, որ Մայրագոյն Արեւելքում ոչ-քրիստոնէայ պետութիւնների մի քանի հպատակներ յարելով որեւէ քրիստոնէական դաւանութեան, դրանով իրաւունք են համարում իրանց պահանջելու քրիստոնէայ քաղաքակրթութեամբ պետութիւնների որեւէ մէկի դիպլոմատիական պաշտպանութիւնը, որպէս զի դրանով խոյս տան իրանց կառավարութեան իշխանութիւնից.

Ի նկատի ունենալով, որ այդ նորադաւանների պաշտպանութիւնը անհամար նեղութիւնների պատճառ է դառնում քրիստոնէայ ազգերի համար և առաջ է բերում կռիւններ այդ ազգերի և ոչ-քրիստոնէայ պետութիւնների մէջ, հետեւաբար մի մնայուն վտանգ է ստեղծում խաղաղութեան համար,

### Կօնգրէսը կարծում է

որ քրիստոնէական քաղաքակրթութեան ազգերը պէտք է հրաժարուեն չնորհել դիպլոմատիական պաշտպանութիւն ոչ-քրիստոնէայ պետութիւնների այն հպատակներին, որոնք գրկում են քրիստոնէական որեւէ դաւանութիւն: (Այս որոշումը վերաբերում է Չինաստանի դէպքերին):

III. Կօնգրէսը ընդունում է, որ զինուորագրութեան սահմանափակումը կամ զինուորական պարտաւորիչ ծառայութեան ջնջումն կարող է մեծ զարկ տալ խաղաղասիրական շարժման և թուլացնել միլիտարիզմի ազդեցութիւնը: Նա յոյս ունի, որ անգլիական ազգը, որին այսօր սպառնում է պարտաւորական

զինուորագրութիւնը, կը մերժի զօրանոցների ստրկութիւնը և դրանով կը նպաստի զինադադարութեան խնդրին, որ արդէն քննուել է Հաագի կօնֆերանսում: Կօնգրէսը միևնոյն ժամանակ իր եռանդուն հիացումն է արտայայտում կոմս Լ. Տօլստօյին խաղաղասիրական այն գաղափարների համար, որ նա տարածում է իր գրուածքներով:

Նոյն օրը, կօնգրէսի փակմանից յետոյ, տեղի ունեցաւ բանկէտ և ապա կօնգրէսիսաները կատարեցին նաևով մի զբօսանք՝ դիտելու Սկօլտիայի ծովը, լճերն ու լեռները:

## Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ